ԲԱՆԱՎԵՃ

ՄԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ*

ՈՍԳԻՊ ԶԱՐԱՔՕԼՈՒ

Քսաներորդ դարի սկզբին Անատոլիան մասնակցեց տնտեսական համաշխարհային մեծ վերելքին: Նրա գյուղատնտեսությունը ենթարկվում էր շուկայական տնտեսության պահանջներին, զարգանում ու բարգավաճում էին նավահանգստային քաղաքները՝ Ստամբուլը, Իզմիրը, Տրապիզոնը, երկիրը ծածկվում էր երկաթուղային ցանցով: Էլեկտրականության և գազի օգտագործումը, հանրակառքով և նավով հաղորդակցության միջոցների զարգացումը քաղաքներում բազմապատկում էին ներդրումների հնարավորությունը, բազմանում էին արդիական շինությունները, մենատները իրենց շքեղությամբ հավասարվում էին Ռուսաստանի ծովափնյա դղյակներին: Պետք է նկատի առնել այդ բարգավաճումը, նույնիսկ եթե այն սոցիալական առումով նպաստավոր չի եղել հասարակության մի մասի համար: Ըստ դոկտոր Ալի Գյուլլերի կատարած հետազոտությունների, 1915 թվին ոչ մահմեդականները հիսուն տոկոսից ավելի էին կազմում քաղցրեղենի, ձեթի, պահածոների, կրաղյուսի, կղմինդրի, հախճապակու, կաշվի, մետաքսի, տպագրության, թղթի, մետաղագործության և մի քանի այլ արտադրությունների պատկանող ձեռնարկություններում: Այդուրի վաճառականության, ատաղձագործության, սղոցագործության և այլ բնագավառներում այդ մասնակցությունը հասնում էր ընդամենը հիսուն տոկոսի:

Արտաքին առևտրի բնագավառում կարելի է բերել հետևյալ օրինակները: 1894 թվականին Տրապիզոնում հումքի և ձեռնարկությունների արտադրանքի երեսուներեք արտահանողներից քսանինը ոչմահմեդականներ էին: Նրանց թվում կային նաև միջազգային մակարդակով արտահանողներ: Այսպես օրինակ, 1893 թվականին Մանչեստերում՝ աշխարհի ամենակարևոր հյուսվածքեղենի կենտրոններից մեկում, կային քսանչորս հայ գործարարներ: Բանկային ճյուղում միայն Անատոլիայում գործող իննսուն հոգուց ընդամենը երկուսն էին թուրք, չասած՝ դեռ Ստամբուլի մասին: Այս-

* Զեկուցումը կարդացվել է 2000թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատի շենքում կազմակերպված «Հայ-թուրքական երկխոսությունը հայկական հարցի մասին» միջազգային գիտաժողովում:

պես կոչված «փոքրամասնությունների» մաքրագործումը, որոնք, ըստ էության, ոչ այլ ինչ էին քան զուտ բնիկներ, հանդիսացավ մի տեսակ արտաքին առևտրի, մանավանդ՝ արտահանությունների անկման և արտասահմանում Թուրքիայի գործարարների անհետացման պատճառը: Անհրաժեշտ եղավ սպասել մինչև հիսունական-վաթսունական թվականները՝ բանկային գործունեության վերակենդանացման, և մինչև ութսունական թվականները՝ մեր գործարարներին միջազգային շուկաներում կրկին տեսնելու ինչպես նաև արտահանությունները զարգացնելու համար:

Տասնիններորդ դարի վերջում մեծ վերելք էր նկատվում նաև կրթության բնագավառում: Նախ՝ պետությունը քաջալերում էր *մեդրեսեներից* (կրթական ավանդական հաստատություններ) բացի գործող կրթական հաստատությունների գործունեությունը, իր հերթին՝ ոչմահմեդական համաքաղաքացիները հիմնում էին իրենց սեփական դպրոցները, այդպիսով նպաստելով այդ բնագավառում գրեթե վերածննդի առաջացման գործին: Կրթության այս բնագավառում իշխում էր կատարյալ մրցակցության մի մթնոլորտ: Իր հոդվածներից մեկում Զոհրապը, որը օսմանյան Խորհրդարանի ամենաերևելի անդամներից մեկն էր և դատական համակարգի բարեփոխության նախաձեռնողը, նկարագրել է այդ մթնոլորտը: Իր այդ հոդվածում Զոհրապը, որը զոհ է գնացել 1915 թվականի ցեղասպանությանը, գրում է, թե այն ժամանակ, երբ վերջին մի քանի տարիներին հայկական դպրոցներն անկում էին ապրում, թուրքական կրթական հաստատությունները, ներառյալ նաև Դար-Ուլ Ֆունուն (համալսարանը), ընդհակառակը՝ կատարյալ վերելքի մեջ էին: Այդ մրցակցության, կրթության բնագավառում եղած վերելքի մասին կարելի է պատկերացում կազմել հետևյալ թվական տվյալներից. միայն Սև ծովի, այսինքն Պոնտոսի շրջանում գոյություն ուներ հունական ութ հարյուր հիսուն նախնական և երկրորդական դպրոց, հազար չորս հարյուր քսանութ դասավանդողներով, քսանհինգ հազար տղա և տասնմեկ հազար աղջիկ՝ աշակերտներով: Թուրքիայում հունական դպրոցների ընդհանուր թիվը հասնում էր չորս հազար երեք հարյուր ինսնունի: Ստամբուլի քառասուն դպրոցներում և հիսունյոթ գավառների վրա բաշխված ութ հարյուր տասներեք հայկական դպրոցներում գրանցված աշակերտների թիվն անցնում էր ութսուն հազարից, այսինքն ավելին էր, քան Թուրքիայի այսօրվա հայ բնակչության թիվը: Հրեաներն ունեին երեք հարյուր երեսունմեկ դպրոց: Պատկերացնո՞ւմ եք ուրեմն, թե գրական, թատերական, երաժշտական և այլ բնագավառներին պատկանող ինչ արտակարգ հարստություն էր պարունակում Անատոլիան:

Կրթական ու մշակութային այդ «հեղափոխությունը» նպաստում էր ողջ հասարակության լուսավորման գործին: Կարևոր է հայ մտավորականների կատարած ներդրումը մեր մշակույթի մեջ հատկապես ճարտարապետության, գրականության, նկարչության, թատրոնի, մամուլի և հրատարակության բնագավառներում: Գինը, որ 1915 թվականին ստիպված են եղել վճարել այնքան բնագավառներում ռահվիրաների դեր կատարած այդ մտավորականները, հանդիսանում է անարդար ու անընդունելի մի բան: Այդ անիծյալ 1915 թվականին իրենց կյանքը կորցրած հեղինակների գործերով կարելի էր կազմել գրական բարձրորակ և ստվար հատորների մի հավաքածու:

Բեկումը և խորը խզումը մեր երկու հասարակությունների միջև բացի մարդկային կորուստներից, կործանել է նաև տնտեսական կյանքը:

Նրանք, ովքեր կարողացել են վերապրել այդ սպանդից, այնուհետև ծառայել են Արևմուտքն էլ ավելի հարստացնելու գործին, Արևմուտք, որը սակայն ունեցել է իր դերը այդ ողբերգության մեջ: Արևմուտքն այդ վերապրողներին ապաստան տալու հետ միասին ներգրավել է նաև մի շատ որակյալ աշխատուժ, միաժամանակ ազատվելով անատոլյան աշխարհի իր մրցակիցներից:

1908 թվականի հեղափոխությունը, չնայած այն կատարվել էր երիտթուրքերի կողմից, հույս էր բերել կայսրության բոլոր դավանանքներին պատկանող և ամենատարբեր համոզումներ ունեցող քաղաքացիներին: Եթե այդ ձախողված և անավարտ ժողովրդավարական հեղափոխությունը շարունակեր հույս ներշնչել մարդկանց և եթե այդ տարածաշրջանի ժողովուրդները կարող լինեին միասին որոշել իրենց ճակատագիրն իմպերիալիստական ամեն տեսակի բաժանումներից անկախ և կառուցած լինեին իրենց միասնական տունը, ապա այդ ժամանակ տնտեսության ծաղկումը Անատոլիան կվերածեր աշխարհի ամենաբարգավաճ շրջաններից մեկի: Անատոլիան ուներ այդ կարողությունը, այդ ներուժը:

Քայքայման փոխարեն այդ շրջանում կարելի կլիներ իրականացնել բազմազգ, բազմալեզու, տարբեր նահանգներից բաղկացած ապակենտրոնացած ու ժողովրդավարական մի պետություն: Արևելյան հարցը՝ կայսրության բաժանման համար Մեծ տերությունների միջև տարված վայրի պայքարը, պառակտեց և քայքայեց աշխարհագրական այդ շրջանը: Գինը, որ պետք էր վճարել հիմնելու համար միատարր մի պետություն, բազմաթիվ ազգությունների, լեզուների, մշակույթների ու դավանանքների հավաքատեղի հանդիսացող աշխարհագրական այդ շրջանում, եղավ ցեղասպանությունը, ազգային մաքրագործումը, բռնագաղթն ու բռնի ձուլումը: Բալկանյան երկրներից մի քանիսն ապրել են նման ողբերգություններ, նույնիսկ եթե դրանք չեն հանդիսացել ցեղասպանություն: Բոսնիայի իրադարձությունները, ազգային մաքրագործման գործողությունների հետևանքով, կրկին ակնհայտ դարձրին ցեղասպանության սպառնալիքը:

Բալկանյան պատերազմների շղթան, Առաջին համաշխարհային պատերազմից մինչև ցեղասպանություն և ազգային մաքրագործումներ, ոչնչացրեց ոչ միայն բոլոր արտադրողական հարստությունները, այլ նաև՝ մարդկային արտադրողական ուժը, կրթական հաստատությունները, սաստկացրեց հետամնացությունը: Գյուղատնտեսական կամ այլ արտադրություններ՝ աղետալիորեն կործանվեցին: Հաշվի առնելով բոլոր նրանց, ովքեր զոհվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ ռազմաճակատում կամ համաճարակների հետևանքով, հաշվի առնելով արտագաղթը, քաղաքացիական բնակչությանը բնաջնջող աղքատությունը, հայերի, սիրիացիների, հույների և ժամանակ առ ժամանակ քրդերի տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր պատճառներով բռնագաղթը, որ անվանում են *թեհքջիր*, Օսմանյան բնակչությունը (ներառյալ նաև արաբական երկրները), որի պաշտոնական թիվը 1914 թվականին հասնում էր 16 միլիոնի, արհեստականորեն կրճատվել է մոտավորապես երեքից երեք ու կես միլիոնով: Իշխանությունների կողմից այս թվական տվյալների վերաբերյալ բանավեճ չբացելու ցանկության ետևում թաքնված է «հայկական տաբուն»: Մարդկային այդ կորուստների քաղաքական պատասխանատվությունն ընկնում է, անկասկած, իր քաղաքացիների դեմ պատերազմ հայտարարած «Միություն և առաջադիմություն» կուսակցության վրա:

Կարելի է նույնիսկ ասել, թե այդ կուսակցության արկածախնդիր քաղաքականության հետևանքով անհետացել է այդ շրջանի արդյունաբերող բնակչության գրեթե մեկ երրորդը: Մտավոր ավելի զարգացած մակարդակ ունեցող բնակչության դեպքում այդ հարաբերակցությունը ավելի մեծ է, այն աստիճան, որ հանրապետության ստեղծման սկզբնական շրջանում նախնական դպրոցի դասատուն կարող էր դառնալ պետական մի հաստատության տնօրեն: Ցեղասպանությունը, բացի ազգային և մարդկային մաքրագործումներից, նշանակում է նաև մշակութային հաստատությունների անհետացում, տնտեսության ոչնչացում, արտադրության դադար, գյուղատնտեսության կործանում: Այդ են վկայում նախկին ճիթաստաններին, այգեստաններին, շերամներով հարուստ թթենիների պարտեզներին ու կանաչապատ դաշտերին փոխարինելու եկած անմշակ, չոր, ամայի ու ավերակ տարածությունները: Ինչ վերաբերում է պաշտամունքի վայրերին և դպրոցական շինություններին, ապա դրանցից շատերը լքվել են՝ և կամ էլ՝ օգտագործվել այլ նպատակներով: Գյուղական շատ վայրեր նման են հնագիտական տեղավայրերի:

Բայց եթե պատմությունն այլ ընթացք ստացած լիներ, ինչպիսի՞ն կլինեին հետևանքները: Ազգագրական տեսակետից, Անատոլիայի հայերի թիվը կլիներ վեց միլիոնով ավելի. նույնը վերաբերում է հույներին: Անատոլիան կունենար որակյալ արտադրողական ուժեր, ինչպես արդյունաբերության և գյուղատնտեսության, այնպես էլ ծովային արդյունաբերության և արտադրության այլ ճյուղերի բնագավառում... Եվ եթե դրան ավելանային զային թուրքերի և քրդերի ստեղծած հարստությունները, ապա մի՞թե Անատոլիան, ողջ Միջագետքը չէին դառնա աշխարհի տնտեսական բարգավաճ և գրավիչ կենտրոններից: Տնտեսագետների կատարած հետազոտությունների շնորհիվ կարելի է հաշվել այն հսկայական ներուժը, որ կորցրել է Անատոլիան: Չպետք է մոռանալ նաև ասորի քաղդեացիներին, որոնք, իբրև Միջագետքի հնաբնակ ժողովուրդ, կբերեին այդ շրջանին Մեսոպոտամիայի ժամանակաշրջանից եկող քաղաքակրթության ժառանգությունը:

Պատերազմի և ցեղասպանության հետևանքով տեղի ունեցած տնտեսական անկումն այնպիսի հսկայական չափերի է հասել, որ հետագայում երբեք հնարավոր չի եղել այն ամբողջապես վերականգնել. ինչ վերաբերում է տնտեսական լճացմանը, այն մասամբ հաղթահարվել է 50-ական թվականներին միայն:

Թուրքիայի տնտեսական հետամնացությունը մեծացել է քսաներորդ դարի առաջին քառորդում տասնամյակների պատերազմների հետևանքով: Մեծ քաղաքները կորցրել են իրենց անցյալի հմայքը: Դրան փոխարինելու են եկել պետության պաշտոնյաներին վերապահված պարահանդեսներն ու տոնախմբությունները, այն ժամանակ, երբ Անատոլիայի հասարակական կյանքն ընկղմվել էր խավարի ու լճացման մեջ, այն նույն Անատոլիայի, որը ժողովրդական իր բազմաթիվ երգերով ստեղծագործական աղբյուր էր հանդիսացել Կոմիտասի համար, մի տարածաշրջան, որը ժամանակին լայնորեն բացել էր իր դռները զանազան շեփորախմբերի և նվագախմբերի առջև:

Վերջերս, գրող Էրթուգրուլ Այաղազը հրատարակել է մի վեպ, նվիրված դպրասկզբի հիշողություններին: Նրա վերնագիրն է՝ «Եթե մենք կարողանայինք քայլել միասին»: Գրողը վերականգնել է իր հայրենի քաղաք

Մուգլայի հին հունական տներում տեղի ունեցած մարդկային ողբերգությունը: Հեղինակը պատկերացրել է, թե իր վեպը գրվել է 1908 թվականին, ինչը այդ վեպին տվել է ապագայապաշտական (ֆուտուրիստական) մի բնույթ: Նա պատկերացրել է, թե պատմությունը ստանում է մի այլ ընթացք և որ մարդիկ կարողանում են ապրել միասին: Այս վեպը կարոտ է արտահայտում մի այլ կյանքի հանդեպ, կյանք, որ ցանկալի կլիներ ապրել և այդպիսով հանդիսանում է եղերգությունը այդ այնքան ցանկալի, բայց երբեք չապրված կյանքի: Մեր հասարակությունը երբեք չի ունեցել քաջություն երգելու այդ եղերգությունը: Ամոթի զգացումը կատարվածի հանդեպ և գիտակցության արթնացումն այն հարցում, թե Անատոլիայի բոլոր տառապանքները մերն են, նաև պետք է մեզ օգնի գտնե փրկելու մեր միասնական ապագան:

Անատոլիայի աշխարհագրական շրջանը ստիպված է խաղաղ ապրել իր բոլոր բնակիչների հետ և, մանավանդ, հետ կանչել իր կորած զավակներին, որովհետև այդ կանչը խեղդված է մնացել մեր կոկորդում ավելի քան ութսուն տարիներ ի վեր:

Ես մի երեզանք ունեմ... Տառապանքը, իհարկե, երբեք չի կարող հատուցվել: Բայց պետք է անել անհրաժեշտը: Նվազագույն լուծումը, որ գտել է մարդկությունը նման դեպքերի համար՝ վնասի հատուցումն է. նույնիսկ եթե այդ հատուցումը չի կարող հետ բերել զոհերին և կամ էլ մոռացնել տալ տառապանքը...

Պատմական տարածքները պետք է փրկենք ավերումից: Դա մեր ներողության մի մասնիկն է, ինչպես նաև հիշողության պահպանման միջոցներից մեկը: Հիշելը՝ ամոթը և տառապանքն իրար հետ կիսելու միջոց է: Մենք պարտավոր ենք քաջություն ունենալ ասելու ճշմարտությունը մեր քաղաքացիներին, երևան հանելու ողջ կատարվածը: Պետք է վերանորոգենք այն բոլոր շինությունները, որոնք կարող են դեռ վերանորոգվել: Այդ շինությունների վրա պետք է արձանագրենք այն, ինչ տեղի է ունեցել: Եվ նույնիսկ կիսաքանդ շինությունները պետք է բացենք այցելուների առջև: Այն փողոցներում ու վայրերում, ուր իրադարձությունների թողած հետքերը ջնջվել են ամբողջապես, պետք է հուշարձաններ կանգնեցնենք,որպեսզի այդ իրադարձությունները հավիտյան գրանցված մնան մեր գիտակցության մեջ:

Անատոլիայում ծնվածներին և նրանց ժառանգներին պետք է շնորհենք քաղաքացիության իրավունք: Իմ կարծիքով, դա նույնպես մասն է կազմում մեր ներողության: Պետք է հիմնել հետազոտության և ուսուցման կենտրոններ՝ անհետացած, ավերված ու ջնջված մշակույթներն ուսումնասիրելու և ուսուցանելու համար: Դա նույնպես մասն է կազմում մեր ներողության: Այդ ժամանակ մենք գուցե կհասկանանք, թե ինչ ենք կորցրել, կգիտակցենք գուցե նաև, թե կորցրել ենք մարդկայինը, մարդուն:

Մեր տառապանքները, միանալով մյուսների տառապանքին, կստանան մի առանձին իմաստավորում, թույլ տալով մեզ առաջ անցնել այդ տառապանքներից: Բայց դրան կհասնենք մենք այն ժամանակ միայն, երբ հնարավոր կլինի կազմակերպել մի ավելի մեծ բանավեճ, բանավեճ, ուր մենք մեզ համար խնդրի առարկա կդարձնենք և մեզ հարց կտանք կատարվածի պատճառների մասին: Եվ գուցե այդ ժամանակ, քաջալերված մեր հանդեպ մեր իսկ քննադատական վերաբերմունքից, մյուսները կառաջադրեն միևնույն հարցերը:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԻՋԵՎ. ՄԻ ՆՈՐ ԵՎ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՈՒՂԻ*

ԺԱՆ - ԿԼՈԴ ՔԵԲԱԲՋՅԱՆ

Սրանից քսան տարի առաջ, 1980 թվականի հունիսի 16-ին Ռաֆֆի Հերմոն Արաքս անունով ստամբուլցի մի հայ երիտասարդ հաստատվում է Փարիզում, ուր չէր ճանաչում գրեթե ոչ ոքի: Նա իր ծննդավայրում՝ Ստամբուլում, սկսել էր զբաղվել լրագրությամբ և թատրոնով: Նա իր ետևում էր թողել երիտասարդական այն բոլոր հիշատակները, որ ապրել էր ինքը թրքական և ընդհանրապես ստամբուլյան մշակույթների՝ նմանը չունեցող խճանկարի գրկում, ինչպես նաև նախազգացումները՝ այն դժվարին օրերի վերաբերյալ, որ ապրելու էր Թուրքիան 1980 թվականի սեպտեմբերի 12-ից հետո: Այդ ժամանակաշրջանում Փարիզի հայկական համայնքը մեծամասնությամբ ներկայացնում էր ինքնությունը կորցրած անդամներից կազմված և մեկուսացված մի խումբ:

Նույն ժամանակամիջոցում ես, որ ծնվել եմ Փարիզում (ծնողներս ծագումով Յոզղատից են, Թուրքիայից), համայնքիս իր մեկուսացումից դուրս բերելու նպատակով հրատարակության էի պատրաստում «Հայաստան 1900» գիրքը և առաջարկել էի այդ օրերին հրապարակ իջած «Հայերը. մի ցեղասպանության պատմություն» աշխատության հեղինակ, պատմաբան Իվ Տերնոնին աշխատակցել ինձ: Ես հույս ունեի, թե իմ գիրքը մի օր կկարդային նաև Թուրքիայի նոր սերունդները, այդպիսով հայտնաբերելով իրենց երկրի պատմության մի էջը:

Անհրաժեշտ եղան տասնչորս տարիներ, որպեսզի Ռաֆֆին և ես հանդիպեինք մի ծրագրի շուրջ, անհրաժեշտ և անխուսափելի մի երկխոսություն կազմակերպելով հայերի և թուրքերի միջև: Տասնչորս տարիներ՝ նույն երկրում, նույն քաղաքում, միևնույն համայնքի ներսում գտնվելով հանդերձ, մի այդքան կարևոր ծրագրի շուրջը մեր ուժերը միացնելու համար:

Պատկերացնենք ուրեմն մի պահ, թե որքան դժվար էր հայերի և թուրքերի համար խոսել իրենց պատմության մասին ութսունհինգ տարվա թշնամությունից հետո:

---

* Զեկուցումը կարդացվել է 2000թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատի շենքում կազմակերպված «Հայ-թուրքական երկխոսությունը հայկական հարցի մասին» միջազգային գիտաժողովում:

Պետք է առնվազն Դոն Քիշոտ լինել առաջադրելու համար այն հարցը, որ հետևյալ շատ պարզ բառերով արտահայտել էի ես 1986 թվականին Մարսելի մի պարբերականում, վտարվելով, այնուհետև, աշխատանքից. «Պետք է արդյո՞ք երկխոսություն սկսել թուրք մտավորականների հետ»:

Բայց այդ հարցում իսկական հանդգնություն ցուցաբերեցին իրենք՝ թուրքերը: Եվ նրանց համարձակությունը համեմատելի չէ մերինի հետ: Նշենք «Բելգե» հրատարակչության հիմնադիր տիկին Այշե Նուր Զարաքօլուի, նրա ամուսնու՝ մարդու իրավունքների պաշտպան Ռագիբ Զարաքօլուի, ընկերաբանության մասնագետ՝ գիտնական Թաներ Աքչամի, Ֆրանկֆուրտ քաղաքի «Ցեղասպանության հակառակորդներ» թուրքական Միության նախագահ Ալի Էրթեմի անունները (որոնցից վերջին երեքը ներկա են այստեղ), հիշենք նաև լրագրող և գրող տիկին Ելդային: Նրանք հանդիսանում են այս պատմական երկխոսության հաստատման ռահվիրաները, երկխոսություն, որի վրա ութսունհինգ տարի շարունակ կատարյալ մի տաբու է եղել:

Թուրքիայից ժամանած մեծ հյուրերի՝ պարոններ Ռագիբ Զարաքօլուի, Օրալ Չալիշլարի, Մեթե Թունչայի ներկայությունն այստեղ մեզ հույս է ներշնչում, որ տառապանքով ծնունդ առած և այնքան երկար ժամանակ սպասված այս երկխոսությունը ոչ միայն կշարունակվի, այլ նաև՝ կընդլայնվի:

Սփյուռքի հետազոտությունների կենտրոնի վեցամյա գործունեությունը, որի տարբեր էջերը գրվել են Ֆրանսիայում, Գերմանիայում, Հայաստանում և Թուրքիայում, մինչև Ավստրալիա և Միացյալ նահանգներ հասնող արձագանքներով, ավարտվում են այսօր:

Հայերին ուղղված մի հաղորդագրությամբ Սփյուռքի հետազոտությունների կենտրոնն օգնություն էր խնդրել Մարմարայի շրջանում տեղի ունեցած երկրաշարժի զոհերի համար: Մի այլ հաղորդագրությամբ մեր կենտրոնը ապրիլի 24-ին հրապարակայնորեն հայտարարել էր հետևյալը. «Մեր ցույցերի ժամանակ այլևս չպետք է լսենք «թուրք մարդասպան» կամ «Թուրքիա մարդասպան» կոչերը: ... Ի՞նչ միտք ունի նման կոչեր բղավել կամ Թուրքիայի դրոշները հրկիզել... Ավելի խելացի և ավելի դրական մի քայլ չի՞ լինի արդյոք, թույլ տալ քաջարի մարդկանց շարունակել իրենց պայքարը, ճանապարհ ցույց տալով իրենց սեփական ժողովրդին, այդ պայքարի մեջ ներգրավելով իրենց իսկ երկրի գիտակից տղամարդկանց և կանանց»:

Այս երկու կոչերը արձագանք գտան ինչպես Սփյուռքում, այնպես էլ Հայաստանում, նաև՝ Թուրքիայում, Գերմանիայում և Միացյալ նահանգներում:

Երխոսությունը մենք միշտ էլ դիտել ենք և համարել իբրև մի մշտատև և որոշակի գործողություն:

Այսօր, առաջարկում եմ ձեզ, եթե համաձայն եք, մի նոր գլուխ բացել և մի նոր էջ գրել մեր պատմության մեջ: Այդ էջում իբրև եզրակացություն կասվի հետևյալը. մենք չենք կարող մոռանալ, մեր հիշողությունից ջնջել, լռության մատնել կամ ուրանալ անցյալի փաստերն ու դրանց բնույթը, մանավանդ, երբ դրանք պատկանում են ամենասարսափելիների թվին: Երկխոսությունը պետք է հենց բուժվելու, լռությունից դուրս գալու համար:

Մինչդեռ սրանից մեկ շաբաթ առաջ Փարիզի հայկական ռադիոկայանից լսեցինք հետևյալ խոսքերը. «Չի կարելի երկխոսություն վարել

մեկուկես միլիոն զոհերի շուրջ»: Ոչ, իհարկե: Ի դեպ, ոչ ոք չի ցանկանա նման մի երկխոսություն, և այդ խոսքերը անտեղի են և ցավալի: Գիտաժողովը ցանկանում է երկխոսություն սկսել կյանքի շուրջը և՝ հույսի:

Եվ եթե ոչ երկխոսությամբ, ապա ինչպե՞ս կարելի է լուծել խնդիրը, խզել լռությունն ու վերացնել տաբուն, վերականգնել միասին մեր հիշողությունը: Դրսից եկող ճնշումներո՞վ արդյոք: Հայերը և թուրքերն այսօր պետք է պատասխան տան հետևյալ հարցին. բավարարվա՞ծ ենք մենք արդյոք մինչև այժմ ձեռք բերված արդյունքով: Եվ եթե ոչ (ի դեպ՝ ինչպես կարելի է բավարարված լինել), ապա ժամանակը չի՞ եկել արդյոք տեսնելու համար թե, չնայած օգտագործված բոլոր միջոցներին, ինչ որ մի բան այնպես չի արվում ինչպես որ պետք է: Չմոռանալով, որ հայ ժողովուրդը ժամանակ չունի սպասելու նորից մի քանի տասնամյակ. առանց մոռանալու, որ իրադրությունը փոխվել է ամբողջապես, որ մենախոսության ժամանակն ավարտվել է արդեն, Սփյուռքի հետազոտությունների կենտրոնը հայտարարում է, թե խնդրի իսկական լուծումը, այն, որ ոչ ոք անցյալում չի համարձակվել առաջարկել, հանդիսանում է *բաց և հրապարակային երկխոսությունը:*

Հակառակ դեպքում մենք ստիպված կլինենք սահմանափակվել այսօրվա արդյունքներով, այսինքն՝ բավարարվել շատ քչով: Եթե այդպես է երկու կողմերի համար էլ, ապա անկեղծությամբ խոստովանենք, որ այդ վիճակը իրականում մեզ ձեռնտու է: Ինչո՞ւ. որովհետև այդ իրադրության մեջ ենք մենք տեսնում մեր գոյության տրամաբանությունը, որովհետև այդ իրադրությունը կենտրոնական մի տեղ է գրավում մեր ինքնության մեջ, թույլ տալիս մեզ նաև քողարկել մեր թուլությունները: Մի խոսքով այդ իրադրությունը ձեռնտու է մեզ. որովհետև դրա շնորհիվ մենք պահպանում ենք մեր գոյությունը:

Սփյուռքի հետազոտությունների կենտրոնը մերժում է այդ տրամաբանությունը: Մենք և մեր բարեկամները չենք ցանկանում այլևս, որ թուրք և հայ գալիք սերունդները մեծանան ազգայնամոլ գաղափարներով և լցվեն իրար դեմ փոխադարձ ատելությամբ: Կրկնում եմ, մենք ցանկանում ենք երկխոսություն վարել կյանքի համար, այլ ոչ թե մահվան: Ոչ ոք մեզ չի կարողանա ստիպել մոռանալ ցեղասպանությունը, բայց ոչ ոք էլ չի կարող մեզ ստիպել ուրանալ հայերի և թուրքերի տասը դարերի համակեցությունը, մարդկային հարաբերությունները և կամ էլ անտեսել, եթե թույլ կտաք ասել, մեր երկու ժողովուրդներին սպասող համատեղ ապագան:

Իսկ ի՞նչ է երկխոսությունը: Դա նախ և առաջ մի երկարատև գործընթաց է, որը հենց միայն այդ պատճառով կարող է լինել խոստումնալից: Ոգեշնչված երկու կողմերի բարի կամեցողությամբ նրա վերջնական հաջողությունը, չնայած հանդիպած բազմաթիվ դժվարություններին, երաշխավորված է: Այդ գործընթացը ենթարկվում է երկու կողմերի բարոյական և նյութական փոխադարձ շահերին և չի կարող լինել շինծու, քանի որ դա մի երկար գործընթաց է, այլ ոչ թե մի որևէ հաշվենկատության և կամ էլ որևէ հանկարծակի փոփոխության արդյունք: Եվ եթե երկար ժամանակ է պետք մի արդյունքի հանգելու համար, ապա դա այն պատճառով, որ այդ գործընթացը պայմանավորում է արմատապես փոփոխել մեր վերաբերմունքները: Իսկ երբ խոսքը վերաբերում է ոչ միայն առաջատար ու լուսավոր մարդկանց, այլև մի ամբողջ հասարակության կամ պետության, ապա արագ արդյունքներ սպասելն անիմաստ է:

Երկարատև մի գործընթացի առաջին իսկ օրից արդյունքներ սպասելը, կներեք իհարկե, միամիտ մի հոգեբանության արդյունքը չէ՞ միթե: Ավելին, միամտություն չէ՞ կարծել, արդյոք, թե միևնույն աշխարհամասում, միևնույն տարածաշրջանում գտնվող և ընդհանուր սահմանով օժտված մեր երկու երկրները ենթակա չեն միշտ միասին ապրելու:

Դարասկզբին Թուրքիայում տեղի ունեցած ողբերգությունը հակադրում է մեր ժողովուրդներին և միաժամանակ՝ միացնում նրանց: Խեղումը և հաշմությունը վերաբերում են երկու կողմերին էլ, թե՛ նրա գործադրողին և թե՛ նրան ենթարկվողին: Մեկը չի կարող առողջանալ առանց մյուսի: Հազվադեպ է, երբ մի հասարակարգ հիվանդանում է առանձին: Մենք պետք է սկսենց մեզանից, բայց պարզ է, որ մեր նպատակին հասնելու համար երկու կողմերը պետք է աշխատեն միասին սկսել մի ամբողջովին նոր մեկնակետից: Դա կարող է կատարվել միմիայն ժողովրդավարական և համերաշխ մի գործընթացի միջոցով: Գործընթաց, որն իր մեջ կընդգրկի երկու համայնքները և նրանց ոչ թե առանձին, հաշմված ու խզված, այլ՝ համատեղ հիշողությունը:

Այդպիսով, բացված ուղին կլինի հիշողության և գործունեության տարբեր բնագավառներում հնարավորություններով հարուստ մի ուղի: Ոմանք կնախընտրեն իրապաշտական քաղաքականությունը (ռեալպոլիտիկ) այն ժամանակ, երբ մյուսները կպնդեն անցյալի ճանաչման և նրանից այս կողմ անցնելու անհրաժեշտությունը՝ մի համատեղ առողջացման միջոցով, առողջացում, որը կարող է տեղի ունենալ միայն մենկուսացումից ու լռությունից վերջնականապես դուրս գալու շնորհիվ:

Եվ հենց այս բարդ և համբերատար գործընթացն է, որ խոստումնալից է: Եվ, ինչպես արդեն ասացինք, մենք չենք տեսնում ոչ մի այլ ճանապարհ, ոչ մի այլ մեթոդ կամ ռազմավարություն:

Մենք համոզված ենք, որ քսաներորդ դարի ցեղասպանությունների անխուսափելի, անհրաժեշտ և օրինական հիշողությունը քսանմեկերորդ դարում պետք է վերափոխվի երկխոսության, հաշտության և խաղաղության համար տարվող մի գործունեության, և ոչ թե ծառայի ներքին քաղաքականության հարցերին:

Այս գիտաժողովը կհանդիսանա սկիզբը արմատական այդ փոփոխության, փոփոխություն, որից էլ կախված կլինեն հարաբերությունները թուրքերի և հայերի միջև: Հայտարարագիրը, որ կկազմենք մենք գիտաժողովի վերջում, զուտ քաղաքացիական նախաձեռնություն է, որն արտացոլում է այն արժեքավոր դերը, որ կարող է ապագայում կատարել մեր կազմակերպությունը և, հուսանք նաև՝ մեր փոխադարձ համայնքները: